Հայտարարություն

ՀՀ Կոտայքի մարզի <<Կաթնաղբյուրի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի քիմիայի և

կերպարվեստի ուսուցչի թափուր տեղերի մրցույթի համար

Հայտարարվում է մրցույթ՝ՀՀ Կոտայքի մարզի <<Կաթնաղբյուրի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի քիմիայի /5 դասաժամ/,կերպարվեստի /2 դասաժամ/,անգլերենի /12 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է (Ձև1),
2. Փաստաթուղթ / դիպլոմ /՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հրապարակման օրվանից մինչև 2021թ.սեպտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ 10^{00} –ից -15^{00}-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ.սեպտեմբերի 9-ին՝ ժամը 15^{00}-ին՝ Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ , գյուղ Կաթնաղբյուր 2-րդ փողոց շենք 26:
Տեղեկությունների համար զանգահարել՝
(093) 88-24-51 հեռախոսահամարով:
ՀՎՀՀ - 03510278